

“Գրողի ծոցը” ԱՄՆ-ից Երեւան հասավ



Երեկ երեկոյան սիրահարների այգու սրճարաններից մեկում հավաքվել էին մի խումբ երիտասարդ գրողներ, քննադատներ: Նրանք շնորհավորում էին միմյանց երիտասարդ գրող Կարեն Ղարսլյանի նոր գրքի՝ “Գրողի ծոցը” երեսուն ու ութ տձեւ հայրենների ժողովածուի լուսընծայման կապակցությամբ: Չեղինակի ձեւավորմամբ գրողի ծոց հիշեցնող գիրքը կարող էիր ձեռք բերել հանգանակությամբ:

Գիրքը ձեռք վերցնելուց հետո առաջինը կարելի է նկատել վերջին էջում ցրված տողերը, որոնք վերցված են գրողի ծոցից. “Ես լռում եմ այն ժամանակ, երբ լռությունն ապստամբություն է ընդդեմ խոսքի... ճանապարհները մենակ հեռվից են նեղ թվում... Պատերազմը խաղաղության դաշտանն է” եւ այլն:

Շնորհանդեսի ժամանակ հեղինակին կարող էիր տեսնել միայն համակարգչի մոնիտորից այն կողմ, քանի որ Կարենն արդեն 5 տարի է, ինչ ապրում է ԱՄՆ-ում: Իր՝ ԱՄՆ գնալը նա համարում է սեփական հասարակությունում օտարվածության հետեւանք:

“Անհատի սեփականաշնորհումը հասարակության կողմից իրենից ներկայացնում է համակարծիք մեծամասնության բարքերի, սովորույթների, գաղափարների ու ավանդույթների պարտադրումը: Ես “Այլն” էի փափագում, որովհետեւ այլընտրանքի բնական չափաբաժինը չէի ստանում Երեւանում”, - մտածում է Կարենը:



Երիտասարդ գրողի ծնողներն ապրում են Չայաստանում. “Ցավ եմ զգում, որ տղաս այսօր մեզ հետ չէ. ինքն իր գիրքն էլ տպված վիճակում չի տեսել: Կարենը դեռ փոքր տարիքից հետաքրքիր հայացքներ ուներ իրերի ու երեւույթների հանդեպ: Նրա երեւակայությունը սահմաններ չուներ: Նա ազատ մարդ է, եւ երբ հասարակությունը չհասկացավ նրա մտորումները, չընդունեց նորը, նա ստիպված եղավ

հեռանալ”:

Շնորհանդեսին հավաքվածները Կարեն Ղարսլյանի գիրքը համարեցին հայրեններն ու մարդկային սերը նոր ոճով եւ նոր ուղղությամբ ներկայացնող ստեղծագործություն:

“Կարենի հենց առաջին ստեղծագործությունները կարդալիս հասկացա, որ ամբողջովին նոր ձայն է գալիս գրական ոլորտ:

Շատ հետաքրքիր է Կարենի լեզուն, որ կարողանում է առարկայացնել զգացողությունները, մտորումները: Պոեզիան սովորաբար միշտ վերացական է լինում, իսկ Կարենի բանաստեղծությունները քո կողքին են”,-կարծում է գրող, հրապարակախոս Մարինե Պետրոսյանը:

Երիտասարդ գրող Կարեն Անթաշյանի համար Ղարսլյանի լեզուն եւ մոտեցումները ժամանակի արտացոլումն են. “Ինձ համար հետաքրքիր են Կարենի գործերը զուտ էքսպերիմենտալ առումով:

Մտածում եմ՝ այն, ինչ նա հիմա գրում է, ընթացք է, հանգրվանային կետ չէ ինձ համար դեռեւս, բայց հույս ունեմ, որ նրա ստեղծագործությունները դեռեւս գտման կարիք ունեն, ինչը կհանգեցնի տեքստի հաղթահարման”:

Յենարան
16:51 10/06/2010